ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11 մարտի 2026թ-ին կնքված N «ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-26/54» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

«24» մարտի 2026թ.

ք.Երևան

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ Լուսինե Գասպարյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աննա Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով «ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-26/54» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի Տեխնիկական բնութագիրում ավելացնել ծառայություններ և պահեստամասեր՝ համաձայն Հավելված 2-ի:

1.2 Հաստատել պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը նոր խմբագրությամբ՝ համաձայն համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2026թ-ի մարտի 11-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ՀՀ, ք.Երևան, Գայի պողոտա 14/3
Կառավարական տուն 1	Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 1510002448988985
Հ/Հ 900011022085	ՀՎՀՀ 01060547
ՀՎՀՀ 02505554	
_____	_____
/ ստորագրություն /	/ ստորագրություն /
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«11» մարտի 2026թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-26/54 ծածկագրով պայմանագրի
« 24 » մարտի 2026թ. կնքված N 1 Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	50111130/17	VOLVO XC90 PLUG IN HYBRID 2024թ ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված 1.1	դրամ	800 000	1	ք.Երևան, մատակարարի նշված հասցեում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո. 2026թ. մարտի 11-ից - դեկտեմբերի 30-ը
2	50111130/18	VOLVO S90 PLUG IN HYBRID 2024թ ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված 1.1	դրամ	400 000	1		
3	50111130/19	VOLVO EX30 BEV 2024թ ա/մ վերանորոգման ծառայություն՝ համաձայն հավելված 1.1	դրամ	300 000	1		

Կատարողը իրականացնում է երաշխիքային սպասարկման ժամանակ առաջնային մաշվածության նյութերի և դետալների փոխարինում և նորոգման ծառայություններ:

Ծառայությունները կմատուցվեն ըստ Պատվիրատուի պահանջի՝ Կատարողին պահանջի ծագման մասին տեղեկացնելու պահից 2 օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ է սահմանվում:

Կատարողը Պատվիրատուի պահանջով տրամադրում է տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

Կատարողը պետք է ունենա տեխսպասարկման կայան, անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և մասնագիտական անձնակազմ, մեքենայի ախտորոշման և այլ անհրաժեշտ սարքավորումներ և ծառայություններ, ինչպես նաև՝ զոդման աշխատանքներ իրականացնելու հնարավորություն:

Կատարողի կողմից սպասարկումը պետք է իրականացվի աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում:

Փոխարինված ավտոմասերը պահանջի դեպքում՝ մեկօրյա ժամկետում, պետք է վերադարձվեն Պատվիրատուի ներկայացուցչին:

Ավտոմեքենայի վերանորոգման ցանկը կցվում է հավելված 1.1-ով:

Նորոգման ծառայությունները պետք է իրականացվեն կից ներկայացված ցանկին համապատասխան:

Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա քարշակ՝ Երևան քաղաքի վարչական տարածքում քարշակի ծառայությունը մինչև տեխնիկական սպասարկման կենտրոն պետք է կատարվի անվճար:

Բոլոր ծառայությունները պետք է իրականացվեն Կատարողի գտնվելու տարածքում:

Ավտոպահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

Տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի Երևան քաղաքի տարածքում, ինչպես նաև բոլոր արհեստավորները և մասնագետները պետք է լինեն մեկ վայրում:

Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայության դիմաց:

Տեխսպասարկման կայանը հագեցած է առնվազն 6 հատ ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն 3.5 տոննա բարձրացնելու կարողությամբ:

Վճարովի սպասարկման ծառայությունները երաշխիքային և հետերաշխիքային ժամանակահատվածում **կզեղչվեն առնվազն 20 տոկոսով:**

Ծառայության տեխնիկական բնութագրերը և ծառայությունների միավոր գները ներկայացված է N 1.1 հավելվածում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գայի պողոտա 14/3
Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510002448988985
ՀՎՀՀ 01060547

/ ստորագրություն /
Կ.Տ

Հավելված թիվ 2
«11» մարտի 2026թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱ-ԾՁԲ-26/54 ծածկագրով պայմանագրի
« 24 » մարտի 2026թ. կնքված N 1 Համաձայնագրի

Տեխնիկական բնութագիր
Ձեռքբերվող ծառայությունների և պահեստամասերի նկարագիր և գնացուցակ

	Ծառայության անվանում	Ծառայության գինը՝ ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)		
		Volvo XC90	Volvo S90	Volvo EX30
	Չափաբաժին	1	2	3
1	Բանալիի ծրագրավորում	75,000	75,000	-
2	Համարանիշի շրջանակի փոխարինում	2,500	2,500	2,500
3	Անվաբացքի կարգավորում	40,000	40,000	40,000

	Պահեստամասի անվանում	Չափման միավոր	Պահեստամասի միավորի գինը՝ ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)		
			Volvo XC90	Volvo S90	Volvo EX30
	Չափաբաժին		1	2	3
1	Բանալի	հատ	97,000	97,000	31.400
2	Համարանիշի շրջանակ	հատ	7,000	7,000	7,000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՎԱՆՏԳԱՐԴ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գայի պողոտա 14/3
Արարատբանկ ԲԲԸ
ՀՀ 1510002448988985
ՀՎՀՀ 01060547

/ ստորագրություն /
Կ.Տ